

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.15-րդ և 1.6-րդ կետերի պահանջներով կարգադրում եմ՝

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2012թ. դեկտեմբերի 11-ի 01/15/6523-12 հանձնարարականի՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ծրագրին համաձայն 2013թ. հունվարի 1-ի դրությամբ մարզի բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու և իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով

Հովհաննիսյան Վ.- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ , հանձնաժողովի նախագահ

Բաղայան Հ. - ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Գեղարքունիքի մարզային գործակալության տնօրեն

Բարսեղյան Կ. - ,, Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի կենտրոն,, ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մասնաճյուղի տնօրեն/համաձայնությամբ/

Մելքոնյան Վ. - ՀՀ գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի տնօրեն /համաձայնությամբ/

Մարզի համայնքների ղեկավարները- իրենց համաձայնությամբ:

2. Մարզի տարածաշրջաններում անասունների համատարած հաշվառման կազմակերպման և անցկացման պատասխանատվությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ներքոհիշյալ մասնագետների վրա՝

Գրիգորյան Ա.- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի վարիչ, Վարդենիսի տարածաշրջան

Բաղեյան Ռ.- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, Գավառի տարածաշրջան

Խալաֆյան Ա.- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ, Սևանի տարածաշրջան

Ղազարյան Ս.- մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության գլխավոր մասնագետ, Մարտունու տարածաշրջան

Հովհաննիսյան Ս.- մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության բաժնի գլխավոր մասնագետ, Ճամբարակի տարածաշրջան

3. Հանձնաժողովին՝ անասունների գլխաքանակի հաշվառման աշխատանքները մարզի տարածաշրջաններում կատարել 2013 թվականի 1-17-ը:

4. Կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Մ.Մանուկյանին:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ